

**ՀՀ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ 2013Թ. ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ՎԻՃԱԿԻ
ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆԸ**

Մարզի բնակչության թիվը 2014թ. հունվարի 1-ի դրությամբ կազմել է 255000 մարդ, որը հանրապետության ողջ բնակչության 8.4%-ն է, որից 138200-ը քաղաքաբնակներ են (54.2%), 116800-ը՝ գյուղաբնակներ (45.8%): Նախորդ տարվա համեմատ բնակչության թիվը պակասել է 300-ով:

2013 թվականի ընթացքում մարզում ծնվածների թիվը կազմել է 3632 մարդ կամ նախորդ տարվա համեմատ 1-ով ավել, իսկ մահացածների թիվը պակասել է 49-ով և կազմել 2208 մարդ: Բնական աճը կազմել է 1424 մարդ: Գրանցված ամուսնությունների թիվը նախորդ տարվա համեմատ պակասել է 94-ով՝ կազմելով 1638, ամուսնալուծությունների թիվն ավելացել է 34-ով՝ կազմելով 279:

2013թ. մարզում արտադրված արդյունաբերական արտադրանքի ծավալը կազմել է 166.0 մլրդ. դրամ նախորդ տարվա 144.8 մլրդ դրամի փոխարեն կամ աճը կազմել է 14.6%: Աճ է գրանցվել մշակող արդյունաբերության ոլորտում շուրջ 3.3 մլրդ. դրամի (3.9%), էլեկտրաէներգիայի արտադրության ոլորտում շուրջ 2.6 մլրդ. դրամի (5.1%) և հանքագործական արդյունաբերության ոլորտում՝ շուրջ 710.5 մլն. դրամի (17.4%): Աճն արձանագրվել է հիմնականում սննդի (8.4%), խմիչքների (7.2%), դեղագործական ապրանքների (48.3%) կաշվե իրերի (18.6%), այլ ոչ մետաղական հանքային արտադրատեսակների (9.3%) արտադրության բնագավառներում:

Արդյունաբերական արտադրանքի իրացման ծավալն աճել է 13.9 %-ով՝ կազմելով 165.0 մլրդ դրամ:

Արտադրանքի իրացման ծավալների մեջ իրացումը ներքին շուկայում կազմել է 129.9 մլրդ. դրամ, իսկ արտահանումը՝ 35.1 մլրդ. դրամ, որից ԱՊՀ երկրներ արտահանվող արտադրանքի ծավալը՝ 30.8 մլրդ. դրամ և այլ երկրներ՝ 4.3 մլրդ. դրամ: Նախորդ տարվա համեմատ գրանցվել է արտահանման ծավալի 13.3 % աճ:

մլն դրամ

	2012թ.	2013թ.	շեղում +/-	%
Թողարկված արտադրանքի ծավալը	144864.5	166063.7	21199.2	114.6
Արտադրանքի իրացման ծավալը	144882.7	164966.6	20083.9	113.9
Արտահանման ծավալը, որից՝	30973.4	35107.3	4133.9	113.3
ԱՊՀ երկրներ	26602.5	30782.8	4180.3	115.7
այլ երկրներ	4370.9	4324.5	-46.4	98.9

2013թ. մարզում իրականացվել են 29.0 մլրդ. դրամի կապիտալ ներդրումներ, որը նախորդ տարվա համեմատ պակաս է 14.5 մլրդ. դրամով և կազմում է հանրապետությունում իրականացված կապիտալ ներդրումների 6.5 %-ը:

2013թ. գյուղատնտեսական համախառն արտադրանքը կազմել է 56.7 մլրդ. դրամ, որը նախորդ տարվա համեմատ ավել է 4.0 մլրդ. դրամով կամ աճը կազմել է 7.6%:

2013թ. իրացվել է 14.7 հազ. տոննա միս՝ նախորդ տարվա 12.9 հազ. տոննայի դիմաց (աճը՝ 13.9 %): Հաշվետու ժամանակաշրջանում արտադրվել է 57.9 հազ. տոննա կաթ՝ (աճը՝ 8.2%) և 117.3 մլն. հատ ձու (սվազել է 11.3 %-ով):

Մանրածախ առևտրի շրջանառության ծավալը 2013թ. կազմել է 45.5 մլրդ դրամ, որը նախորդ տարվա համեմատ ավել է 5.8 մլրդ. դրամով կամ աճը կազմել է 14.6%: Բնակչությանը մատուցած ծառայությունների գումարը կազմել է 29.7 մլրդ. դրամ նախորդ տարվա 29.3 մլրդ. դրամի դիմաց կամ աճը կազմել է 1.3 %:

2013թ. մարզում գրանցված գործազուրկների թիվը կազմել է 5500 մարդ՝ նախորդ տարվա չափով: